ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՆ ԾԱՂԿՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուրարտուի՝ Առաջավոր Ասիայի այդ երբեմնի հզորագույն ստրկատիրական պետության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում շուրջ երեք քառորդ դար ընդգրկող մի ժամանակաշրջան, որը հարատևում է Արգիշտի I-ի թագավորության սկզբից (մ. թ. ա. 786 թ.) մինչև Ռուսա I-ի տիրապետության նախավերջին տարին (մ. թ. ա. 714 թ.)։ Հենց այդ պատմական հատվածն էլ (բացառելով Սարդուրի II-ի մեկ-երկու մասնակի անհաջողությունները մ. թ. ա. 743 և 735 թթ.), երբ Վանի թագավորությունը հիմնականում ապահովում է իր առաջնությունը Առաջավոր Ասիայում, իրավամբ կարելի է անվանել Բիայնիլի-Ուրարտուի ծաղկման դարաշրջան։

Հիշյալ դարաշրջանում Ուրարտուի պատմության առավել աչքի ընկնող դեմքը Արգիշտի I-ն էր, որի տիրապետության սկզբնական տարիներին (մ. թ. ա. 785—784 թթ.) Վանի թագավորությունը նվաճողական պատերազմներ էր մղում հեռու հյուսիսում։ Այստեղ ուրարտական բանակը մի կողմից հասնում է մինչև Դիաուխի (պատմական Տայք), Տարիունի (Դարոյնք), Զաբախա (Ջավախք), Իգա (Ջալդրը լճի հարավում), մյուս կողմից՝ մինչև էթիունյան ցեղային միության լայնատարած տերիտորիան (Սարիղամիշից մինչև Սևանա լիճը)։ Ավելի հարավում, հայկական Շիրակում, Արգիշտին նվաճում է էրիախի երկիրը, իսկ Արաքսի վերին հոսանքում՝ Արիլիանին (Արեղեանք), Արունին (Հավնունիք), Ուիտերուխին, Իրկուան կամ էրիկուան և այլն[1]։

Արգիշտի I-ի մ. թ. ա. 782 թ. արշավանքները հյուսիսում նորանոր հաջողություններ են բերում Ուրարտուին։ Այս անգամ նա ոչ միայն անցնում է Արաքսը, այլև ամրանում նրա ձախ ափին (մի հանդամանք, որ երբեք չէր հաջողվել նրա նախորդին՝ Մենուային)։ Կտրելով, այնուհետև, Արարատյան դաշտավայրը և արշավելով դեպի հյուսիս, նա գրավում է Ուլուանի- և Կիեխունի[2] երկրները և հասնում Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը՝ Բշտիկունի, Լիկիու[3]։ Այսպիսով, Արգիշտի I-ին հաջողվում է տիրել Արարատյան արգավանդ դաշտավայրին և դեպի Սևանա լիճը ձգվող բարձրադիր արոտավայրերին։ Այդ

---

[1] Н. В. Арутюнян, Хорхорская летопись Аргишти I. «Эпиграфика Востока», VII, М.-Л., 1953, *էջ 86—90, 1 սյունակ, տող 5—12, 17—37։*

[2] *Տե՛ս Արգիշտի I-ի էլառի արձանագրությունը։* Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 *(այսուհետև հապավված՝* УКН), *արձանագրություն 131։*

[3] *Այս երկրի մասին հիշատակում է նաև Արգիշտի I-ի Լճաշենում (Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին) հայտնաբերված արձանագրությունը* (УКН, *134)։*

[4] *Այդ երկրների տեղագրման մասին տե՛ս* Н. В. Арутюнян, Некоторые вопросы топонимики Урарту, *«Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 1, էջ 187—192։*

նվաճումները հնարավորություններ են ընձեռում լրացուցիչ երկրագործական և անասնապահական մթերքներ ստանալու ուրարտական պետության օրավուր աճող կարիքների համար։

Արարատյան դաշտավայրում վերջնականապես հաստատվելու և Ուրարտուի տիրապետությունը Սևանի ավազանում ու ընդհանրապես հյուսիսում հետագայում ևս ապահովելու նպատակով այժմյան Երևանի հարավ-արևելյան ծայրամասում մ. թ. ա. 782 թ. Արգիշտի I-ը կառուցում է Էրեբունի ռազմա-ստրատեգիական քաղաք-ամրոցը[5]։ Գառնիի 1963 թ. նորագյուտ արձանագրության համաձայն Արգիշտին նվաճել է Գիառնիա(նի) երկիրը[6]։ Մ. թ. ա. 782 թ. Արգիշտի I-ը նվաճումներ է ձեռնարկել նաև հյուսիս-արևմուտքում[7]։

Ուրարտուի ռազմական ճիգերի մյուս կարևորագույն բնագավառը հարավային և արևմտյան երկրներն էին, ուր նրա ձգտումները բախվում էին Ասորեստանի շահերի հետ։

Մ. թ. ա. 783 թ. հարավ-արևմուտքում Արգիշտին հաղթանակ է տանում Նիրիրա (այժմյան Տուր-Արդին լեռներում) և Խատե (Հյուսիսային Ասորիքում), իսկ արևմուտքում՝ Մելիտեա (հայկ. Մալաթիա), Կամանա(?) (ասորեստ. Կամմանու) և մի շարք այլ երկրների նկատմամբ[8]։ Ինքնին հասկանալի է, որ Ուրարտուի հաղթանակը Խատե երկրում, վերջին հաշվով, նշանակում էր Ասորեստանի ստրատեգիական դիրքերի կիջում Ասորիքում։ Հյուսիս-Ասորիքյան միությունը, որ համախմբվել էր Արպագի շուրջը և մինչև այդ կողմնորոշվում էր դեպի Ասորեստանը, այժմ հակվում է դեպի Ուրարտուն։ Դրա հետևանքով Ասորեստանը կամա-ակամա կտրվում է ոչ միայն Ասորիքից, այլև երկաթի ու այլ մետաղների հանքավայրերից Փոքր Ասիայում[9]։

Սկսած Արգիշտի I-ի թագավորության VI տարվանից (մ. թ. ա. 781 թ.) Ուրարտուի քաղաքական պատմության մեջ արմատական բեկում է նկատվում։ Ուրարտական պետությունը արդեն բավականաչափ կազդուրվել էր հյուսիսում, արևմուտքում և հարավ-արևմուտքում տարած հաղթանակների շնորհիվ։ Այժմ նա իրեն նախապատրաստված էր զգում ուժերը անմիջականորեն չափելու իր գլխավոր ախոյանի՝ Ասորեստանի հետ։ Եվ այսպես, մ. թ. ա. 781 թ. սկսվում է Ուրարտուի և Ասորեստանի հուժկու և անընդմեջ ռազմական բախումների փուլը, որը հարատևում է տարիներ շարունակ։ Հիշյալ տարում Արգիշտի I-ը ընկճում է ասորեստանյան զորքը, որն ըստ երևույթին մուտք էր գործել Ուրարտուի սահմանները Վանա լճից հարավ։ Սկզբում ճակատամարտը տեղի է ունենում Խուրուշկիայում (տեքստում հիշատակվում է սոսկ նրա թագավոր Դադին), Բոհտանի հովտում, իսկ այնուհետև ուրարտական զորքը սրընթաց արշավում է դեպի հարավ-արևելք՝ Սանային հարևան Արսի(տա) երկիրը, Ուրմիա լճից

---

5 Այդ մասին մանրամասն տե՛ս Ն. Վ. Հարությունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 78—96։

6 Б. Н. Аракелян, Находка урартской надписи в Гарни, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 290—293։ Н. В. Арутюнян, Чтение и интерпретация урартской надписи из Гарни. Նույն տեղում, էջ 293—297։

7 Արգիշտի I-ի V տարվա ձեռնարկումների մասին տե՛ս Խորխորյան տարեգրության II սյունակի 25—45 տողերը, նրա կրկնագրի (դուբլիկատի) հատվածներից մեկը (УКН, 128А2, տող 1—30) և Արին-բերդի արձանագրությունները (УКН, 138 և Посл., 11)։

8 Տե՛ս Խորխորյան տարեգրություն, II սյունակ, տող 5—18։

9 „Всемирная история", I, էջ 538։

շատ ավելի հարավ ընկած մի շարք այլ տերիտորիաներ՝ հասնելով ընդհուպ մինչև Դիալայի միջին հոսանքները (Բարիլու)[10]։ Այս արշավանքի ճանապարհին հպատակեցվում են նաև Բուշտու, Բարուատա, Բարշուա երկրները[11], որոնք այդ ժամանակ, հավանաբար, գտնվում էին Ասորեստանի ազդեցության ոլորտում։ Ուստի այդ երկրների դեմ Ուրարտուի տարած հաղթանակը ևս, վերջին հաշվով, պետք է դիտել որպես հաղթանակ հենց Ասորեստանի նկատմամբ։

Պայքարը Ուրարտուի և Ասորեստանի միջև շարունակվում է նաև հաջորդ տարում (մ. թ. ա. 780 թ.)։ Խորխորյան տարեգրության հիշյալ VII տարվա տվյալները նորից հաղթանակ են հավաստում ասորեստանյան զորքի նկատմամբ, որը կրկին մխրճվել էր Ուրարտուի հարավային սահմանները (Խուրուշկիա)։ Արգիշտիին հաջողվում է դարձյալ ընկճել ասորեստանյան զորքերին, որոնք ստիպված են լինում նահանջելու հարավ-արևելյան ուղղությամբ։ Ուրարտական թագավորը հետապնդում է նրանց մինչև Ուրմիա լճից հարավ ընկած որոշ տերիտորիաներ՝ Բուշտու, Արխա և այլն[12]։ Սակայն այս տարվա արդյունքները, նախորդ տարվա համեմատությամբ, նվազ նպաստավոր էին Ուրարտուի համար։ Արգիշտի I-ը, հավանաբար, Ուրմիա լճից հարավ ընկած տերիտորիաներում հանդիպում է ասորեստանյան զորքերի դիմադրությանը, եթե նկատի ունենանք, որ նա այլևս հնարավորություն չի ունենում մտնելու շատ ավելի հարավում ընկած մի շարք այնպիսի երկրներ (Բարուատա, Բարշուա, Բարիլու), որոնք նա գրավել էր դեռևս նախորդ տարում։ Չնայած դրան, Սալմանասար IV-ի զորահրամանատար Շամշի-իլուն այդ նույն 780 թ. ահ ու դողով խոստովանում էր, թե «Արգիշտի ուրարտացու անունը սարսափելի է որպես ծանր հողմ, որի ուժերը լայնածավալ են և որը նախկին թագավորներից ոչ ոքի ձեռք չի պարզել»[13]։

Արգիշտիի թագավորության VIII տարվա երկրորդ արշավանքը ձեռնարկվում է Ուրմիա լճից հարավ ընկած Մանա և Բուշտու երկրները, որտեղից ուրարտական զորքը վերադառնում է հարուստ ռազմական ավարով[14]։

Խորխորյան տարեգրության IX տարվա միակ արշավանքը նորից ուղղված էր Ուրմիա լճից դեպի հարավ ընկած Ասորեստանին ենթակա երկրները։ Այդ արշավանքի ժամանակ Ուրարտուին հաջողվում է արդեն ոչ միայն հպատակեցնել Մանա, Բուշտու և Իրկիտունի երկրները, այլև հասնել ընդհուպ մինչև Ասորեստանի սահմանները[15]։ Սակայն այդ հաղթանակը դեռևս անհրաժեշտ նախադրյալներ չէր ստեղծել Ուրարտուի տիրապետությունը վերջնականապես հաստատելու հիշյալ տերիտորիաներում։ Հենց դրանով էլ պետք է բացատրել այն փաստը, որ հաջորդ՝ X տարում (մ. թ. ա. 777 թ.) Ուրարտուն ստիպված է

---

10 Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, ըստ երևույթին, նույնական է ասորեստանյան աղբյուրների Նամրուին։ И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև հապավված՝ АВИИУ), „Вестник древней истории" (այսուհետև հապավված՝ ВДИ), 1951, № 2, 3, 4, § 28, ծանոթ. 20. § 38, ծանոթ. 6 և այլն։

11 Տե՛ս Խորխորյան տարեգրություն, II սյունակի 51-րդից մինչև III սյունակի 13-րդ տողերը։

12 УКН, 127, III, տող 20—40։

13 И. М. Дьяконов, АВИИУ, 38.

14 УКН, 127, III սյունակ, տող 60—71 և IV սյունակ, տող 1—13։

15 Նույն տեղում, IV սյունակ, տող 14—36։ Տե՛ս նաև Խորխորյան տարեգրության այդ մասի, կրկնագիրը (դուբլիկատը) — УКН, 128B2, տող 1—11։

լինում դարձյալ զբաղվելու Մանայի, Բուշտուի և մերձուրմյան այլ երկրների (Աշկայա, Ուգիշտի[16] և այլն) հպատակեցման հարցով[17]։ Չնայած բոլոր դեպքերում Արգիշտի I-ը միմիայն արձանագրում է իր հաղթանակների մասին, սակայն հենց թեկուզ դեպի նույն երկրները ձեռնարկված տարիներ շարունակ կրկնվող արշավանքները վկայում են, որ Ուրարտուին միշտ չէ, որ հաջողվել է հաղթական երթով վերադառնալու արշավանքներից. ի դեպ, հենց Մանան Խորխորյան տարեգրության մեջ սիստեմատիկաբար հիշատակվում է նաև հետագա տարիներին՝ ընդհուպ մինչև Արգիշտիի թագավորության XIII տարին (մ. թ. ա. 774 թ.)։

Հարցն այն է, որ ի տարբերություն հյուսիսային երկրների, որոնք ընդհանուր առմամբ համեմատաբար քիչ հնարավորություններ ունեին Ուրարտուի բազմաքանակ ու հզոր զորքերին դեմ-հանդիման կանգնելու, հարավ-արևելյան երկրներում դրությունը ավելի բարդ էր։ Այդ վերաբերում է ամենից առաջ Մանային։ Մի կողմ թողնելով Մանայի սեփական ռազմական հզորությունը, նրա թիկունքում կանգնած էր Ասորեստանը, որի համար չափազանց կարևոր էր Մանայի լայնատարած և հարուստ տերիտորիան իր ազդեցության ոլորտում պահելու խնդիրը։ Հետևաբար, մերձուրմյան շրջանում Ուրարտուն գործ ուներ ոչ միայն Մանայի, այլև, վերջին հաշվով, հենց Ասորեստանի հետ։ Այդ հզորագույն ախոյաններից յուրաքանչյուրը բոլոր ուժերով ջանում էր ապահովելու իր առաջնությունը Առաջավոր Ասիայում ընդհանրապես։

Այսպիսով, չնայած Խորխորյան տարեգրությունը հիշատակում է Ասորեստանի հետ Ուրարտուի ունեցած միայն երեք տարիների (VI, VII, IX) ռազմական բախումների մասին (մ. թ. ա. 781, 780, 778 թթ.), բայց անկասկած է, որ այդ բախումները շատ ավելի հաճախակի ու երկարատև բնույթ են կրել։ Որպես դրա ապացույց կարելի է բերել ասորեստանյան էպոնիմների ցուցակները, որոնց համաձայն Ասորիստանը ռազմական արշավանքներ է ձեռնարկել Ուրարտուի դեմ 781—779, 776 և 774 թթ.[18]. այսինքն՝ սկսած 781 թ. չորս տարի անընդմեջ և, այնուհետև, մեկական տարի ընդհատումներով՝ 776 և 774 թթ.։ Հետևաբար, Ուրմիա լճից դեպի հարավ ընկած մի շարք երկրների, առանձնապես Մանայի, Բուշտուի, Բարուասայի, Բարշուայի և Բաբիլուի հետ ունեցած ընդհարումները ևս, որոնց մասին հաղորդում է Խորխորյան տարեգրությունը, հիմնականում պետք է դասել Ուրարտուի և Ասորեստանի միջև տեղի ունեցած ռազմական բախումների շարքը։ Եվ, իսկապես, Խորխորյան տարեգրության VI, VII և IX տարիներին, երբ հիշատակվում է Ուրարտուի և Ասորեստանի միջև տեղի ունեցած դաժան պայքարը, Ուրմիա լճից հարավ ընկած երկրները սիստեմատիկաբար հանդես են գալիս որպես նվաճման օբյեկտներ։ Հարցի այդօրինակ մեկնաբանման դեպքում հստակ կերպով երևում է, որ Արգիշտի 1-ի թագավորության ոչ միայն երեք (VI, VII, IX), այլև ոչ պակաս, քան ութ տարիների (VI—XIII) պատմությունը պետք է դիտել որպես Ուրար-

---

16 Աշկայան, ըստ երևույթին, համազոր է ասորեստանյան աղբյուրների Ուշկայային, իսկ Ուգիշտին՝ Ուիշդիշին։ Այս երկրները ժամանակ առ ժամանակ հանդես են գալիս Մանայի կամ Ուրարտուի կազմում և տեղադրվում են Ուրմիա լճի արևելյան ափերին։

17 Խորխորյան տարեգրություն, IV սյունակ, տող 42—59, ինչպես նաև նրա կրկնագիրը (դուբլիկատ) — УКН, 128B2, տող 23—34։

18 АВИНУ, 39 (ВДИ, 1951, № 2, էջ 306)։

տուի և Ասորեստանի հուժկու և անընդմեջ ընդհարումների մի ժամանակաշրջան[19]։

Հարավ-արևելքում Ասորեստանի հետ ունեցած անընդմեջ ռազմական բախումները, բնականաբար, պետք է թերևս որոշ չափով խարխլեին Ուրարտուի դիրքերը հյուսիսում, քանի որ այդտեղ գտնվող երկրները տարեցտարի տնտեսական ու ռազմական վերելք էին ապրում և համախմբվում ընդհանուր ցեղային միությունների մեջ՝ իրենց անկախությունը թշնամական ոտնձգություններից ապահովելու համար։ Եվ պատահական չէ, որ իր թագավորության դեռևս VIII տարվա (779 թ. մ. թ. ա.) առաջին արշավանքի ընթացքում Արգիշտին կրկին մարտեր է մղում հյուսիսում՝ Ռյա (=Իգա)[20] երկրում (Զալդրը լճի հարավային մասում), այն դեպքում, երբ այդ մարզը Ուրարտուի կողմից նվաճվել էր դեռևս Արգիշտի I-ի տիրապետության II տարում (մ. թ ա. 785 թ.)։ Ուրարտական թագավորը առանց որևէ դժվարության հնազանդեցնում է Ռյա երկիրը, ավերում նրա ամրոցներն ու հրկիզում քաղաքները[21]։ Հյուսիսում, այնուհետև, մ. թ. ա. 776 թ. Ագա երկրում տեղի է ունենում Արգիշտիխինիլի վարչատնտեսական կենտրոնի հիմնադրումը[22], մ. թ. ա. 775 թ. «Տուարածիի հովիտ» (հայկ. Տուրածատափ) երկրում Դաինալա գետից ոռոգիչ ջրանցքի անցկացումը[23], մ. թ. ա. 774 թ. Էթիունի հզոր ցեղային միության լայնատարած տերիտորիայի, ինչպես նաև Էրիախիի, Կատարզայի և Ուիտերուխիի բռնագրավումը[24]։

Արգիշտիխինիլին Արարատյան դաշտավայրում Արգիշտի I-ի մ. թ. ա. VIII դարում հիմնադրած կարևոր կենտրոններից էր։ Ի տարբերություն Էրեբունիի, Արգիշտիխինիլին, ըստ երևույթին, եղել է ոչ այնքան ռազմա-ստրատեգիական, որքան վարչատնտեսական կենտրոն։ Բավական մոտ լինելով բուն Ուրարտուի հյուսիսային սահմաններին և գտնվելով Արարատյան դաշտավայրի գրեթե կենտրոնական մասում, նա վարել է այդ լայնատարած ու բերրի դաշտավայրի հարուստ էկոնոմիկան և, այդպիսով, ապահովել ոչ միայն Ագա տեղական մարզի և ամենից առաջ նրա տերիտորիայում հիմնադրված Էրեբունի և Արգիշտիխինիլի կենտրոնների տնտեսական կարիքները, այլև երկրագործական, այգեգործական-խաղողագործական հարուստ պաշարներ վերամշակել ու մատակարարել Ուրարտուի կենտրոնական իշխանությանը[25]։

Խորխորյան տարեգրության XIV տարվա (մ. թ. ա. 773 թ.) իրադարձությունների նկարագրության մեջ այլևս ոչ մի խոսք չկա ոչ Ասորեստանի և ոչ

---

19 Տե՛ս Ն. Վ. Հարությունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը։ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 84—85։

20 Տե՛ս Н. В. Арутюнян. Заметки по урартской эпиграфике, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 12, էջ 74—76։

21 УКН, 127, 111, տող 43—49։

22 Խորխորյան տարեգրություն, IV սյունակ, տող 67—78, V սյունակ, տող 1—4, ինչպես նաև Խորխորյան տարեգրության այդ հատվածի կրկնագիրը — УКН, 128В2, տող 37—42։ Արգիշտիխինիլին (Արմավիրը) գտնվում է Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանում, Արաքսի ձախ ափին։

23 Տե՛ս Н. В. Арутюнян, Даиннала-тини. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 4, էջ 97—106։ XII տարվա իրադարձությունների մասին տե՛ս Խորխորյան տարեգրություն, V սյունակ, տող 11—26։

24 Խորխորյան տարեգրություն, V սյունակ, տող 33—63։

25 Ն. Վ. Հարությունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը։ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 91, ծանոթ. 6։

էլ նրան ժամանակ առ ժամանակ ենթակա մերձուրմյան երկրների մասին։ Տրվյալ տարում Արգիշտի I-ի ձեռնարկած երկու արշավանքներն ուղղված են մի կողմից դեպի հյուսիս՝ Տարիունի, մյուս կողմից՝ դեպի արևմուտք (Ուրմե)[26]։

Այնուհետև Արգիշտի I-ը թագավորում է ևս 8—9 տարի (մինչև մ. թ. ա. 764 թ.), սակայն Խորխորյան տարեգրության շարունակությունը չի հասել մեզ, ուստի ուրարտագիտությունը առայժմ տեղյակ չէ նրա տիրապետության վերջին տարիների իրադարձություններին։ Շատ հավանական է, որ մ. թ. ա. 773—764 թթ. Ուրարտուն զգալի հաջողություններ է ունեցել հարավում, հարավ-արևելքում և հարավ-արևմուտքում և այդպիսով Ասորեստանին զրկել մի կողմից Տիգրիսի ու Եփրատի միջին ու վերին հոսանքների, մյուս կողմից՝ Ուրմիա լճի ափերին ու նրանից հարավ ընկած մի ամբողջ շարք ստրատեգիական ու տնտեսական կարևոր նշանակություն ունեցող կենտրոններից։ Արգիշտի I-ի թագավորության վերջին շրջանում Ասորեստանը իր դիրքերը Առաջավոր Ասիայում հիմնովին զիջում է Ուրարտուին և ավելի ու ավելի գամվում իր նախնական, համեմատաբար սահմանափակ տերիտորիային։

Այդպիսի եղրակացության են հանգեցնում ոչ միայն Ուրարտուի ռազմաքաղաքական հզորության անընդհատ աճը, այլև Ասորեստանի արտաքին ու ներքին քաղաքականության նկատելի անկումը։ Ըստ որում Ասորեստանի թուլացման պատճառները ամենից առաջ պետք է որոնել նրա ներքին հակասությունների, դասակարգային պայքարի սրման մեջ։ Այդ մասին վկայում են 827—822, 772—758 թթ. երկրի ներսում տեղի ունեցած կատաղի երկպառակությունները[27]։

Ինչ վերաբերում է Ասորեստանի այդ ժամանակվա արտաքին քաղաքականությանը, ապա, թերևս փոխարքա-էպոնիմների ցուցակների տվյալների համաձայն, ոչնչով առանձնապես աչքի չի ընկել այն։ Ի դեպ, ոչ միայն Ուրարտուի, այլև Միջագետքի, մերձուրմյան շրջանի և Փոքր Ասիայի նրան ժամանակ առ ժամանակ ենթակա երկրների մասին անգամ փոխարքա-էպոնիմների ցուցակները բացարձակապես ոչինչ չեն ակնարկում։ Իսկ այդ նշանակում է, որ Ասորեստանը մ. թ ա. VIII դարի 70-ական թթ. վերջերին ու 60-ական թթ. սկզբներին ուժասպառ էր եղել ներքին ու արտաքին հակասություններից, հետևաբար ի վիճակի չէր այլևս ընդունելու այն մարտահրավերը, որին, նրա իրավունքները ոտնահարելով, երկար ժամանակ կոչում էր իր հզորության գագաթնակետին հասած Ուրարտուն։

Ուրարտուի այդ ժամանակվա հզորության ցուցանիշներից մեկն էլ այն էր, որ եթե Արգիշտիի թագավորության սկզբնական շրջանում, որպես կանոն, նա ի վիճակի էր կազմակերպելու ոչ մեծ մասշտաբի արշավանքներ, այն էլ միևնույն ուղղությամբ, ապա հետագայում հնարավոր է դառնում մի շարք, ըստ որում տարբեր ուղղություններով, արշավանքների կազմակերպումը։ Այդ տե-

---

26 Խորխորյան տարեգրություն, V սյունակ, տող 70—81 և VI սյունակ, տող 1—7։ Տե՛ս նաև տարեգրության այդ հատվածի կրկնագրի մի մասը — УКН, 128А4, տող 16—26։ Ուրմեն, հավանարար, համապատասխանում է ասորեստանյան աղբյուրների Շուպրիային կամ նրա մի մասին։ Ուրարտական աղբյուրների Ուրմեի և ասորեստանյան աղբյուրների Շուպրիայի Կուլմերին (Կուլլիմմերին) արտահայտում են միևնույն քաղաքի անունը։ Ուրարտական Ուրմեի տեղադրումը հաստատվում է Մուշում և նրա շրջանում (Տրմերդ) հայտնաբերված Մենուայի արձանագրություններով (УКН, 40, 41)։

27 «Всемирная история», I, էջ 541։

սակետից քաղաքական իրադարձություններով առանձնապես հարուստ են Արգիշտի I-ի թագավորության XI—XIII տարիները, երբ տարբեր ուղղություններով ձեռնարկվող արշավանքները դառնում են շատ սովորական և օրինաչափ երևույթ։ Այդ փաստը կարելի է բացատրել հետևյալ կարևոր հանգամանքներով։

Մեր առջև իր ամբողջ հասակով, մի կողմից, ծառանում է Ուրարտուի աննախընթաց ռազմական հզորության հարցը, երբ նրա ուժերը միանգամայն բավարարում էին միևնույն տարում ռազմական արշավանքներ ձեռնարկելու տարբեր ուղղություններով՝ դեպի հարավ-արևելք և հյուսիս, իսկ մյուս կողմից՝ Ուրարտուի երբեմնի ոչ այնքան ուժեղ ախոյանների տարեցտարի աճող ռազմական հզորության հարցը։

Այսպիսով, Արգիշտի I-ի թագավորության օրոք Ուրարտուն հասել էր իր հզորության գագաթնակետին։ Նրա ազդեցության սահմանները տարածվում էին հարավից մինչև Ասորեստան, հարավ-արևելքից՝ մինչև Բաբիլու (Դիալայի միջին հոսանքը), արևելքից՝ մինչև Ուրմիա լճի հյուսիսային և արևելյան ափերը, արևմուտքից և հարավ-արևմուտքից՝ Եփրատի վերին ու միջին հոսանքների աջափնյա տերիտորիաները (ընդհուպ մինչև Հյուսիսային Ասորիք), իսկ հյուսիսից՝ մինչև Ճորոխի ավազանը, Զալդեր լճից դեպի հյուսիս ընկած շրջանները և Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը։

* * *

Սարդուրյան տարեգրության մեզ հասած հատվածների ուսումնասիրությունը պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ Ուրարտուն շարունակում է պահպանել իր առաջնությունը Հին Արևելքում նաև Սարդուրի II-ի թագավորության ժամանակաշրջանում, համենայն դեպս մինչև մ. թ. ա. VIII դարի 40-ական թթ. վերջերը։

Սարդուրի II-ը ստանձնում է արքայական գահը Ուրարտուի ներսում առկա բարդ իրադրության պայմաններում։ Նրա տարեգրության հենց առաջին տարին (մ. թ. ա. 764 թ.) ահազանգում է ներքին երկպառակությունների՝ մի շարք մարզերի կառավարիչների ընդհանուր բեժերով Ուրարտուի կենտրոնական իշխանության դեմ ձեռնարկված խժդժությունների մասին։ Սարդուրի II-ը, սակայն, ամենայն դաժանությամբ ճնշում է այդ ընդվզումները և զգալի քանակությամբ հարստություն բռնագրավում կամ հարկեր նշանակում խռովության կազմակերպիչների վրա[28]։ Ի դեպ որոշ նոր տվյալներ վկայում են, որ նմանօրինակ ներքին ընդվզումներ տեղի են ունեցել նաև Վանի թագավորու-

---

[38] Այդ իրադարձությունների մասին տե՛ս M. Tsereteli, Die neuen haldischen Inschriften König Sardurs von Urartu, Heidelberg, 1928, էջ 24—25, սյունակ G, տող 1—13։ Հիշատակված տեքստի մեկնաբանության վերաբերյալ տե՛ս Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 62 և էջ 159, ծանոթ. 120։ Հմմտ. Գ. Ա. Մելիքիշվիլու կարծիքը, ըստ որի այստեղ արձանագրված է Ուրարտուի որոշակի խավերի վրա նախկինում նշանակված պետական պարտավորությունների գինումների մասին (УКН, 155, սյունակ G, ծանոթ. 9)։ Այդ կարծիքը հիմնականում պաշտպանում է նաև Ի. Մ. Դյակոնովը։ Տե՛ս И. М. Дьяконов, Урартские письма и документы М.—Л., 1963, էջ 53, ծանոթ. 137։

թյան ծայրամասային մարզերում, մասնավորապես Աղա երկրում՝ Արարատյան դաշտավայրում, Արաքսի ձախափնյա հատվածում[29]։

Երկրի ներքին դրության կարգավորումը Սարդուրի II-ին հնարավորություններ է ընձեռում զբաղվելու նաև արտաքին քաղաքականության հարցերով։ Ներքին պառակտումների հետևանքով, որոշ երկրների, հավանաբար, հաջողվել էր թոթափել Վանի թագավորության լուծը։ Պատահական չէ, որ Եփրատի վերին հոսանքի աջափնյա հատվածում գտնվող Մելիտեան (Մալաթիան) և մի շարք այլ երկրներ, որոնք Ուրարտուի տիրապետությանն էին ենթարկվել դեռևս Արգիշտի I-ի օրոք (մ. թ. ա. 783 թ.), այժմ կրկին դառնում են Սարդուրի II-ի արշավանքի ասպարեզ։ Նա հիմնովին ավերում է Մելիտեան և զգալի քանակությամբ ավար տանում, այդ թվում ոսկի, արծաթ, անասունների հոտեր, ներումն շնորհելով սակայն, նրա թագավոր Խիլարուադային՝ հետագայում սիստեմատիկաբար հարկ վճարելու պայմանով[30]։

Արևմուտքում ձեռք բերած հաջողությունները Սարդուրի II-ին հնարավորություն են տալիս Ուրարտուի սահմանները ընդլայնելու նաև այլ ուղղություններով։ Ուստի նա ռազմական արշավանք է ձեռնարկում դեպի Ռիխիշա երկիրը, Խուրա քաղաքը և այլն[31], այսինքն՝ դեպի Հյուսիսային Միջագետքի հարավ-արևմտյան շրջանները[32], որտեղ ձեռք է բերում հարուստ ռազմական ավար։

Ուրարտուի հաջողությունները Միջագետքում, անկասկած, պայմանավորված էին ոչ միայն նրա ռազմական հզորության աճով, այլև Ասորեստանի թուլությամբ։ Դրա հիմնական պատճառը մ. թ. ա. 762—759 թթ. Ասորեստանում ու նրան ենթակա մարզերում ու քաղաքներում (Աշշուր, Արրապխա, Գուզանա) բռնկված ապստամբություններն էին, որոնց մասին վկայում են ասորեստանյան փոխարքա-էպոնիմների ցուցակները[33]։ Դրան հաջորդող ժամանակաշրջանում Ասորեստանը որոշ չափով ուշքի է գալիս և կրկին փորձեր ձեռնարկում իր դիրքերը ամրապնդելու Խաբուրի (Եփրատի վտակի) վերին հոսանքներում (Գուզանա) և Ասորիքում (Խատարիկա, Արպադ)։ Սակայն դրանք մասնակի հաջողություններ էին և չեն կարող դիտվել որպես ուրարտական էքսպանսիային արժանի հակահարված։ Սարդուրի II-ը աստիճանաբար ավելի ու ավելի էր մոտենում բուն Ասորեստանի սահմաններին։

VIII դարի 50-ական թթ. Ուրարտուն շոշափելի հաջողություններ է ձեռք բերել նաև հարավում՝ նվաճելով Արմե[34] երկիրը և ապա մ. թ. ա. 753 կամ 752 թ. հաղթանակ տարել Ասորեստանի թագավոր Աշշուրներարի VI-ի (753—746 թթ. մ. թ. ա.) դեմ[35]։

---

29 Н. В. Арутюнян, Новая урартская надпись из Давти-блура, ВДИ, 1966, № 3, էջ 97, 104։

30 Տե՛ս Սարդուրյան տարեգրություն, УКН, 156BI, տող 12—31 և Իզոզլուի արձանագրություն — УКН, 158, տող 1—31։

31 УКН, 156C, տող 1—30։ Տեքստը ունի զգալի չափով տուժած մասեր, ուստի այս արշավանքին վերաբերող շատ հարցեր դեռևս անհայտ են մնում ուրարտագիտությանը։

32 Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, էջ 248։

33 И. М. Дьяконов, АВИИУ, 39.

34 Գ. Ա. Ղափանցյանի կարծիքով Արմե երկիրը կարելի է տեղադրել Վանա լճից դեպի հարավ-արևմուտք՝ ժամանակակից Արկանա. գետակի (Զերենե-սուի վտակը) շրջանում։ Տե՛ս Г. А. Капанцян, Хайаса—колыбель армян, Երևան, 1948, էջ 191—193 և բարտեզը այդ գրքի վերջում։

35 УКН, 156 DI, տող 1—13, DII, տող 21—29։

Ասորեստանի դեմ տարած հաղթությունակը, բնականաբար, ոգևորում է Սարգուրի II-ին և նա շուտով (մ. թ. ա. 751 կամ 750 թթ.) ռազմական արշավանք է ձեռնարկում հարավ-արևելյան ուղղությամբ՝ Ուրմիա լճի հարավային ափերից մինչև Դիսլայի միջին հոսանքը, որի ընթացքում նրան հաջողվում է հպատակեցնել Մանա, Բարուատա և Բաբիլու երկրները[36]։ Թուլացած Ասորեստանը ի վիճակի չէր օգնության ձեռք պարզել իր անմիջական հպատակներին։

Շատ կարևոր է Սարգուրի II-ի մ. թ. ա. 751 կամ 750 թթ. ձեռնարկած նրվաճումների նշանակությունը Ուրարտուի ռազմա-քաղաքական պատմության համար, եթե նկատի ունենանք, որ այդ սոսկ երկրորդ դեպքն էր (Արգիշտի I-ի թագավորության վեցերորդ տարվա իրադարձություններից հետո), երբ Ուրարտուն նվաճում էր այդպիսի հեռավոր տերիտորիաներ։ Հետագայում ոչ ինքը՝ Սարգուրի II-ը, և ոչ էլ, մանավանդ, նրա հաջորդները այլևս փորձ չեն անում զբաղվելու Բաբիլուի և Բարուատայի նվաճման հարցերով, քանի որ նրանց ետևում նորից բարձրանում է ահեղ Ասորեստանը։

Միևնույն ժամանակ Սարգուրի II-ը դպալի հաղթանակներ է տանում նաև հյուսիսում, ուր նա հպատակեցնում է էթիունիի ցեղային միությունը, ապա Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերին ներխուժում Իշտիկունի քաղաքի երկիրը։ Սրանով նա ամրապնդում է նախորդ տարվա հաջողությունները, որոնք ձեռք էին բերվել դեպի Սևանա լճի հարավային ափերը ձեռնարկված արշավանքի ժամանակ, որի ընթացքում ուրարտական զորքը հաղթականորեն անցել էր Սևանա լճի ողջ արևմտյան ափի երկայնքով, նվաճել Ուելիկուխի երկիրը և, այնուհետև, նրա հարավ-արևմտյան ափին հաղթանակ տարել Լուեխու ցեղի արքա Ծինալիբիի, իսկ հարավային ափին՝ Արկուկինի երկրի դեմ (հասնելով մինչև Ուրտեխինի)[37]։

Կարևոր է նշել, որ եթե Արգիշտի I-ի արշավանքների մարշրուտը դեպի Սևանի ավազանը ընթանում է հարավից՝ Արարատյան դաշտավայրից (Երևան-Սևան երթուղիով՝ Ուլուանի և Կիեխունի երկրների միջով), ապա Սարգուրի II-ը մուտք է գործում Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը արևմուտքից (էթիունի երկրից)։ Հետևաբար, Սևանի ավազանի հարուստ անասնապահական շրջանները Սարգուրի II-ի թագավորության օրոք արդեն երկու կողմերից առնվել էին ամուր աքցանի մեջ, որի շնորհիվ երկար ժամանակ ապահովվում է Ուրարտուի տիրապետությունը այդ խիստ շահավետ տերիտորիաներում։

Մ. թ. ա. 751 կամ 750 թ. երրորդ արշավանքի իրադարձությունները տեղի են ունենում Վանա լճից դեպի արևմուտք ընկած Ուրմե երկրի տերիտորիայում[38], որտեղ Սարգուրի II-ը նվաճում ու ավերում է 11 ամրոցներ, վերցնում զգալի թվով ռազմագերիներ և խոշոր ու մանր եղջերավոր անասուններ[39]։

---

36 УКН, 155А, տող 1—12։ Բարուատան, հավանաբար, համապատասխանում է ասորեստանյան աղբյուրների Բարրու, Բիտ-Բարրուային, իսկ Բաբիլուն՝ սամրուին, որն այդ ժամանակ բնակչությամբ և կուլտուրայով ուժեղ չափով ենթարկվել էր Բաբելոնի ազդեցությանը։ Տե՛ս И. М. Дьяконов, АВИИУ, 28, ծանոթ. 20։

37 М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, МАК-V, 1896, XV, XVI; Г. А. Меликишвили, УКН, 160, 161.

38 Ուրարտական Ուրմեն, ըստ երևույթին, մոտավորապես համընկնում է պատմական Տարոնին։

39 Г. А. Меликишвили, УКН, 155А, տող 22—25։

Հետագայում, մ. թ. ա. 750—748 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում Սարգուրի II-ը որոշ քայլեր է ձեռնարկում իր պետության սահմանները ընդլայնելու հյուսիսում և ծայրագույն հյուսիս-արևմուտքում։ Հյուսիսում, Արաքսի վերին հոսանքում, նա նվաճում է Արիլիանին (հայկական Արեղեանք), իսկ հյուսիս-արևմուտքում՝ Կուլխան (վրացական Կոլխիդան) և Խուշանին[40]։ Ի դեպ, Խուշանի և Արիլիանի երկրներում դեռևս մ. թ. ա. 785—784 թթ. եղել էր Արգիշտի I-ը[41], իսկ ինչ վերաբերում է Կուլխային, որի հյուսիսային սահմանները հարում էին Սև ծովի հարավ-արևելյան ափերին, ապա Ուրարտուի ամբողջ պատմության ընթացքում միայն Սարգուրի II-ին է հաջողվել երկու անգամ լինելու այդ ծայրամասային երկրում։

Այնուհետև Սարգուրի II-ը արշավանք է ձեռնարկում դեպի Էրիախի երկիրը (պատմական Շիրակ), նվաճում նրա հարուստ շտեմարանները և անասունների ամբողջական հոսքեր բշում դեպի Բիւսյնիլի-Ուրարտու[42]։ Վերադարձին նա հաշվեհարդար է տեսնում դեռևս նախորդ տարում նվաճված Արիլիանիի (Արեղեանք) թագավոր Մուրինիի հետ[43], որը, ըստ երևույթին, փորձել էր չենթարկվել Ուրարտուի կենսարենական իշխանությանը։ Արիլիանիի քաղաքները հրկիզվում են, երկիրը՝ ավերվում։ Ուրարտական թագավորը ներողամտություն է ցուցաբերում նրա թագավոր Մուրինիի նկատմամբ՝ առաջիկայում անտրտունջ ենթարկվելու և հարկ վճարելու պայմանով։ Նմանատիպ դեպք, ակներևաբար, տեղի է ունեցել նաև Էթիունիի կապակցությամբ, որի յայնատարած տերիտորիան Սարգուրի II-ը «նվաճեց» հաջորդ տարում[44], այն դեպքում, երբ այդ ցեղային միությունը ենթարկվել էր ուրարտական տիրապետությանը դեռևս երկու-երեք տարի առաջ։

Հյուսիսային երկրների նկատմամբ տարած զգալի թվով հաղթանակները տարեցտարի ամրապնդում են Ուրարտուի ռազմական հզորությունը։ Ճիշտ է, նա դեռևս համարձակություն չի ցուցաբերում առաջվա նման ոտնձգություններ անելու Ասորեստանի կամ նրան ենթակա երկրների նկատմամբ, սակայն հուժկու ռազմական արշավանք է ձեռնարկում դեպի հեռու արևելք՝ Պարսկաստանի հյուսիսային լեռնային շրջաններում ընկած Արասբարան կամ Կարայադաղ մարզում տեղադրվող Պուլուադի երկիրը։ Ուրարտական զորքը, հարկավ, դիմադրության է հանդիպում այս երկրում, սակայն Սարգուրի II-ին հաջողվում է ճնշել այն և հաղթանակի հասնել։ Ուրարտական թագավորը ավերում է երկիրը, հրկիզում քաղաքները և վերցնում բազում ռազմագերիներ։ Նա կցում է Պուլուադին իր երկրի սահմաններին, տեղում կառուցում պաշտպանական

---

40 Սարգուրյան տարեգրության տվյալներից կարծեք թե երևում է, որ Խուշանին այդ ժամանակ ընդգրկված էր Կուլխայի տերիտորիալ սահմանների մեջ։ Տե՛ս УКН, 155С, տող 1—10։

41 Տե՛ս УКН, 127, I սյունակ, տող 8, ինչպես նաև Խորխորյան տարեգրության այդ հատվածի կրկնագիրը (УКН, 128В1, տող 2)։

42 УКН, 155С, տող 25—34։ Էրիախին երկու անգամ նվաճման օբյեկտ է հանդիսացել նաև Արգիշտի I-ի թագավորության օրոք։ Տե՛ս Խորխորյան տարեգրություն, II և XIII տարիների տվյալները։

43 УКН, 155С, տող 34—39։

44 Տե՛ս УКН, 155С, տող 49—52։ Տվյալ տարում նվաճվում է նաև Ռուիշիանի երկիրը, որի տեղադրումը, սակայն, հնարավոր չէ պարզել։

բնույթի ամրոցներ և կանգնեցնում սեպագիր քարակոթող՝ ի նշան այդ կարևոր հաղթանակի[45]։

Սակայն Թիգլատպալասար III-ի ձեռնարկած ռեֆորմները զգալի չափով վերականգնում են Ասորեստանի հզորությունը[46] և նա կրկին փորձեր է անում ապահովելու իր առաջնությունը Առաջավոր Ասիայում։ Մյուս կողմից, Վանի թագավորությունը ևս ամենևին մտադիր չէր առանց պայքարի Ասորեստանին զիջելու իր առաջնությունը։ Ահա թե ինչու ստեղծելով արևմուտքում ուժեղ կոալիցիա, որի մեջ ընդգրկվեցին Բիտ-Ագուսիի[47] Մատիել, Մելիդի[48] Սուլումալ, Գուրդումի Տարխուլարա և Կումմուխի Կուշտաշպի[49] թագավորները, Սարգուրի II-ը միացյալ ուժերով հարձակման անցավ Ասորեստանի դեմ։ Ճակատամարտում, որ տեղի ունեցավ մ. թ. ա. 743 թ. Հյուսիսային Ասորիքում, Ուրարտուի և նրա դաշնակիցների զորքերը չախչսխիչ պարտություն կրեցին[50]։ Իր կյանքը փրկելու համար ուրարտական թագավորը ստիպված էր գիշերը փախուստի դիմելու։ Թիգլատպալասարը հետապնդում է նրան մինչև «Եփրատի վրա անցկացված կամուրջը՝ Ուրարտուի սահմանը»։ Այնուհետև, Թիգլատպալասարի տարեգրությունը նկարագրում է Ուրարտուի մի շարք բնակատեղիների նվաճումը հայկական Տավրոսում[51]։

Ճակատագրական այդ պարտությունից հետո Ուրարտուն երկար ժամանակ այլևս չի կարողանում փոքրիշատե ուշքի գալ։ Այնուհետև սոսկ մի անգամ Սարգուրի II-ին տեսնում ենք հարավ-արևելքում՝ Մերձուրմյան Մանա երկրում[52]։ Մնացած բոլոր դեպքերում նա իսպառ հրաժարվում է Ասորեստանի և նրան ենթակա կամ ազդեցության ոլորտում ընդգրկված երկրների նկատմամբ տերիտորիալ ակնկալություններից և գերադասում է իր տիրապետությունը ամրապնդել հյուսիսային երկրներում։ Այժմ (մ. թ. ա. VIII դարի 40-ական թթ. վերջերին) Սարգուրի II-ը երևում է մերթ Սև ծովի հարավ-արևելյան ափերի մոտերքում (Կուլխա), մերթ Արաքսի վերին հոսանքում (Աբիլիանի, Աբունի[53],

---

45 УКН, 155E, տող 1—18։ Սարգուրի II-ի Գուլուագիում թողած արձանագրությունը հայտնաբերվել է ավելի քան մեկ տասնամյակ առաջ։ Տե՛ս Mohammad Javad Mashkur, Urartu inscription in Iranian Azerbaijan, Tehran, 1955։ Արձանագրության վերծանությունը տվել է Գ. Ա. Մելիքիշվիլին—ВДИ, 1960, № 3, էջ 3—11, УКН, էջ 453—454 (№ 13)։ Այդ տարում Սարգուրի II-ը արշավանք է ձեռնարկում նաև դեպի հյուսիս ուր կրկին իր տիրապետությանն է ենթարկում Էրեբախի երկիրը։

46 Н. М. Дьяконов, Развитие земельных отношений в Ассирии, Л., 1949, էջ 89—90։

47 Թագավորություն Հյուսիսային Ասորիքում՝ Արպադ (այժմյան Տել Էրֆադ) կենտրոնական քաղաքով։

48 Ուրարտական Մելիտեա, անտիկ աղբյուրների Մելիտենա, հայկական Մալաթիա։

49 Ասորեստանյան Կումմուխը համապատասխանում է ուրարտական Կումախային և անտիկ աղբյուրների Կոմմագենային։ Կումմուխի թագավոր Կուշտաշպին հիշատակվում է նաև սարգուրյան տարեգրության մեջ «Կուշտաշպիլի» ձևով (տե՛ս սյունակ E, տող 41)։

50 Տե՛ս ասորեստանյան փոխարքա-էպոնիմների ցուցակները (АВНУ, 39) և Թիգլատպալասար III-ի տարեգրության 59—82 տողերը (P. Rost, Die Keilschrifttexte Tiglat-Pilesers III, Leipzig, 1893).

51 АВНУ, 41 (59, 67, 83, 176)։

52 Սարգուրյան տարեգրություն, սյունակ B, տող 12—26։

53 Համապատասխանում է պատմական Հավնունիին։ Տե՛ս Н. В. Арутюнян, Заметки по урартской эпиграфике, ՀՍՍՀ ԳԱԿ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1957, № 12, էջ 70—74։

Ուիտերուխի), մերթ Զալդրը լճի հարավային ափերին (Իգա), մերթ էլ սկսած Կարսի մարզից մինչև Սևանա լճի հարավային ափերին հարող լայնատարած տերիտորիաներում (Էրիունի, Ուդուրի-Էթիունի)[54]։

Այնուհետև, շուրջ 4—5 տարի Ուրարտուի քաղաքական պատմության մասին քիչ բան է հայտնի։ Ասորեստանյան փոխարքա-էպոնիմների ցուցակներից և Թիգլատպալասար III-ի արձանագրություններից իրազեկ ենք, որ մ. թ. ա. 735 թ., այսինքն՝ Սարդուրի II-ի տիրապետության մայրամուտին, Ասորեստանը ռազմական արշավանք է ձեռնարկել Ուրարտուի դեմ, որն ավարտվել է վերջինիս պարտությամբ Կումմուխում։ Սարդուրի II-ը ստիպված է լինում թաքնվելու Տուշպայում, որից հետո ասորեստանյան զորքը անկաշկանդ 60 բերու, այսինքն՝ ավելի քան 400 կմ ընդլայնաց արշավում է Ուրարտուի տերիտորիայով և նվաճում ու կցում Ասորեստանի սահմաններին Վանա լճից հարավ-արևմուտք և հարավ ընկած մի շարք երկրներ (Ուլլուբա, Խարխի, Էնդի)[55]։

Այսպիսով, Սարդուրի II-ի օրոք Ուրարտուի ազդեցության սահմանները ժամանակ առ ժամանակ հասել են մինչև Ասորեստան (հարավում), Հյուսիսային Ասորիք (հարավ-արևմուտքում), Դիալայի վերին ու միջին հոսանքները (հարավ-արևելքում), Եփրատի աջափնյա տերիտորիաները (արևմուտքում), Սև ծովի հարավ-արևելյան ափերը (հյուսիս-արևմուտքում), Զալդրը լճի հարավային ափերը (հյուսիսում), Սևանա լճի արևմտյան ու հարավային ափերը (հյուսիս-արևելքում) և Իրանական Ադրբեջանի հյուսիսային լեռնային շրջանները (արևելքում)։ Ուրարտուի առաջնությունը պատմական թատերաբեմում շարունակել է պահպանվել Սարդուրի II-ի թագավորության մի զգալի հատվածում, որը հարատևում է ավելի քան երկու տասնամյակ (մ. թ. ա. 764—742 թթ.)։ Մ. թ. ա. 743 և 735 թթ. Թիգլատպալասար III-ից կրած պարտությունից հետո միայն Ուրարտուի դիրքերը նկատելիորեն խարխլվում են արևմուտքում, հարավ-արևմուտքում, հարավում ու հարավ-արևելքում, բայց լրիվ պահպանվում են հյուսիսում։

* * *

Ուրարտուի անհաջողությունները Ասորեստանի դեմ վարած կատաղի մարտերում թուլացրել էին կամ ի չիք դարձրել նրա դիրքերը ոչ միայն հարավում՝ Ասորեստանին սահմանակից կամ ժամանակ առ ժամանակ նրա ազդեցության ոլորտում եղած երկրներում, այլև հյուսիսում՝ այդ թվում Սևանա լճի ավազանում։ Այդ իսկ պատճառով Իռուսա I-ը ստիպված էր այստեղ անհրաժեշտ ջանքեր գործադրել մի կողմից կրկին ամրապնդելու իր դիրքերը նախկինում Ուրարտուին ենթակա մարզերում, մյուս կողմից՝ շարունակելու իր նախորդների քաղաքականությունը՝ երկրի տերիտորիան ընդարձակելու ուղղությամբ։

Իր թագավորության սկզբնական շրջանում Իռուսա I-ը, հավանաբար, գերազանցարար զբաղվել է երկրի ներքին գործերի կարգավորումով։ Կարծում են, օրինակ, որ թագավորական իշխանությունը ուժեղացնելու նպատակով նա, Թիգլատպալասար III-ի նմանողությամբ, մանրատել է փոխարքայությունները

54 Տե՛ս Սարդուրյան տարեգրություն, սյունակ B, տող 26—35, D, տող 1—30, 45—53, F, տող 1—28, ինչպես նաև УКН, 159, 160, 165 և այլն։

55 АВИИУ, 39 և 42, 43, 44, 45։

և, այդպիսով, սահմանափակել նրանց իրավունքները[56]։ Այնուհետև, ուրարտագիտության մեջ իշխում է այն տեսակետը, ըստ որի Ուրարտուի մայրաքաղաքի տեղափոխումը Տուշպայից (Վանից) Ռուսախինիլի (Թոփրախ-կալե) տեղի է ունեցել հենց Ռուսա I-ի օրոք։ Ըստ Երևույթին, այդ օրակարգի հարց էր դարձել Թիգլատպալասարի կողմից Տուշպային պատճառած ղգալի ավերածություններից հետո[57]։ Ի դեպ, Ռուսա I-ի անվան հետ է կապվում Վանից շուրջ 25 կմ դեպի արևելք ընկած արհեստական լճից մինչև Ուրարտուի «նոր» մայրաքաղաքը[58] անցկացված ջրանցքը, որի ռեսուրսների շնորհիվ այստեղ հիմնվում են խաղողի այգիներ, ցանքադաշտեր և պտտաոներ[59]։

Ինչ վերաբերում է ռազմական հզորությանը, ապա այդ տեսակետից Ռուսա I-ի օրոք Ուրարտուն, իհարկե, այլևս այն չէր, ինչ մենք նրան տեսանք սկսած Արգիշտի I-ի թագավորության սկզբներից (մ. թ. ա. 783 թ.) ընդհուպ մինչև Սարդուրի II-ի տիրապետության վերջին շրջանը (մ. թ. ա. 742 թ.), երբ Վանի թագավորությունը հիմնավորապես չեզոքացրել էր Ասորեստանին և ապահովել իր առաջնությունը Առաջավոր Ասիայում։ Սակայն այժմ էլ Ուրարտուն դեռևս ջանում էր պահպանել իր հավասարակշռությունը առկա բարդ քաղաքական իրադրության մեջ և նույնիսկ երբեմն ընդվզում Ասորեստանի դեմ։

Մ. թ. ա. VIII դարի 30-ական թթ. երկրորդ կեսին և 20-ական թթ. սկզբներին, երբ Ասորեստանում դեռ շարունակում էր թագավորել Թիգլատպալասար III-ը, Ռուսա I-ին, ըստ Երևույթին, այլ բան չէր վիճակված, քան եթե խելացիորեն գնահատել ստեղծված իրադրությունը և ձեռնպահ մնալ Ասորեստանի արմատական շահերը շոշափելուց հարավում և այլուր։ Սակայն, մյուս կողմից, Ուրարտուն այդ ժամանակ նվաճողական գործողություններ ձեռնարկելու հնարավորություններ ուներ հյուսիսում, ուր նա գործ ուներ անհամեմատ ավելի թույլ հակառակորդների հետ։ Ահա թե ինչու այստեղ, Սևանա լճի ավազանում, Ռուսա I-ը ջանում էր ոչ միայն ամրապնդելու Ուրարտուի նախկին դիրքերը, այլև նվաճելու մի ամբողջ շարք նոր երկրներ։ Լճի արևմտյան և հարավային ափերին նա կրկին հնազանդեցնում է Ադախունի, Ունլիկու(խի) կամ Ուելիկու(նի), Լուերու(խի) և Արկուկինի երկրները, որոնք Ուրարտուի տիրապետությանն էին ենթարկվել դեռևս Սարդուրի II-ի թագավորության օրոք, իսկ, այնուհետև, հպատակեցնում «լճից այն կողմ», բարձրադիր լեռներում ընկած թվով 19 այլ երկրներ[60]։

Ասորեստանի ուժեղացմանը զուգընթաց, բնականաբար, Ռուսա I-ի ուշադրությունը տարեցտարի ավելի ու ավելի էր սրվում Սևանի ավազանի հարուստ անասնապահական տերիտորիաների նկատմամբ։ Հարավում կրած ըզգալի կորուստների դիմաց նա աշխատում էր ինչ-որ չափով փոխհատուցում գտնել հյուսիսում։ Ծովինարի արձանագրության որոշ տվյալներից երևում է, որ ուրարտական թագավորը սիստեմատիկաբար լինում էր Սևանի ավազանի նը-

---

56 Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 88, 92։

57 Նույն տեղում։

58 Ռուսախինիլի-Թոփրախ-կալեն ընկած է Տուշպա-Վանի հյուսիս-արևելյան ծայրամասում։

59 Այդ մասին մանրամասն տե՛ս Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Երևան, 1964, էջ 24—28, 33—36 և այլն։

60 Այդ մասին տե՛ս Ռուսա I-ի Նոր-Բայազետի (Կամո) և Ծովինարի արձանագրությունները (УКН, 265, 266)։

վաձված երկրներում ոչ միայն հարկահանության, այլև պաշտպանական ամրոցներ կառուցելու նպատակով։ Ռուսա I-ի հիմնադրած ամրոցների մնացորդներ հայտնաբերվել են Սևանա լճի արևմտյան ափերի մոտակայքում՝ Նորբայազետ (այժմյան Կամո) քաղաքի վրա դեռիշխող սարահարթի վրա («Խալդի աստծո քաղաք») և հարավային ափին՝ Ալիչալու և Սովինար գյուղերի միջև («Թեյշեբա աստծո քաղաք»)[61]։ Այդ նշանակում է, որ Ուրարտուն մտադիր էր հիմնավորապես ամրապնդելու իր դիրքերը հիշյալ հեռավոր լեռնային շրջաններում։ Շատ հավանական է, որ Ուրարտուի տիրապետությունը այստեղ ընդհանուր առմամբ հարատևած լինի եթե ոչ ավելի, համենայն դեպս ընդհուպ մինչև Ռուսա I-ի թագավորության վախճանը։

Երկրի ներքին գրության կարգավորումը և հյուսիսում ձեռնարկված նվաճումները նկատելիորեն ամրապնդում են Ուրարտուի ռազմական հզորությունը և նա փոքրիշատե նախապատրաստված է զգում ուժերը կրկին չափելու Ասորեստանի հետ։ Ռուսա I-ին այժմ առանձնապես հետաքրքրում էր հարավարևելյան ռազմա-ստրատեգիական և պաշտամունքային կենտրոն Արգինի-Մուսասիրը։ Ի դեպ, մ. թ. ա. 727 թ. Ասորեստանում գահ է բարձրանում Սալմանասար V-ը, որի ուշադրության առարկան են դառնում ոչ թե Ուրարտուն, այլ երկրի ներքին գործերը, ինչպես նաև Բաբելոնը։ Ներքին գործերում, օրինակ, Սալմանասար V-ը ավելի շատ է հենվում բանակի վրա, քան իր նախորդը Թիգլատպալասար III-ը։ Նա ջանքեր է գործադրում բռնությամբ ամբողջովին վերջ տալու ազնվականության և տաճարների արտոնություններին։

Այնուհետև, եթե Թիգլատպալասարը, իրեն ենթարկելով Բաբելոնը, այնուամենայնիվ պահպանեց նրա ինքնուրույնությունը, ապա Սալմանասար V-ը վերջ տվեց դրան։ Վերացնելով արտոնությունները Աշշուրի տաճարներում, նա վերացնում է այն նաև Բաբելոնի սրբազան քաղաքներում՝ Նիպպուրում, Սիպպարում և Բաբելոնում։ Այդ պատճառով էլ Սալմանասար V-ի քաղաքականությունը մեծ դժգոհություն է առաջացնում ոչ միայն Ասորեստանում, այլև Բաբելոնում։ Այդ դժգոհությունը, ի վերջո, հանգեցնում է դավադրության Ասորեստանի թագավորի դեմ։ Դավադրությունը ավելի ու ավելի հասունանում է բսկրսած մ. թ. ա. 725 թ., երբ Սալմանասարը անընդհատ զբաղված էր Իսրայելի նվաճմամբ։ Չնայած հենց մ. թ. ա. 725 թ. Իսրայելը ջախջախվում է և ասորեստանյան զորքը մերձենում է անմատչելի լեռնային ամրոց Սամարիային՝ Իսրայելի մայրաքաղաքին, սակայն վերջինիս պաշարումը տևում է շուրջ երեք տարի, որի ընթացքում ասորեստանյան բանակը տալիս է հսկայական զոհեր։ Այդպիսի ծայր աստիճան լարված պայմաններում էլ Ասորեստանում ծագում է ապստամբություն և Սալմանասար V-ի կյանքի դեմ տարիներ շարունակ հասունացող դավադրությունը մ. թ. ա. 722 թ. ի կատար է ածվում[62]։

Ըստ երևույթին, Ասորեստանի համար ստեղծված այդ ծանր ժամանակներին են վերաբերում Ռուսա I-ի հարավում ունեցած որոշակի ռազմական հաջողությունները, որոնց մասին պատմում է Ֆոփուզավայի ասսուրա-ուրարտական երկլեզվյան արձանագրությունը։ Սեպագիր այդ աղբյուրի համաձայն, Ռուսա I-ը դեռևս շարունակում է պահպանել իր դիրքերը անառիկ լեռներում ընկած և անմատչելի անտառներով ծածկված, հետևաբար ստրատեգիական

61 Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 32։
62 В. В. Струве, История древнего Востока, էջ 327—328։

խոշոր նշանակություն ունեցող Արդինի-Մուսասիրում։ Այստեղ ուրարտական թագավորը նախ ծավալում է պաշտամունքային բնույթի զանազան օբյեկտների շինարարություն, այնուհետև իր բանակը համալրելով Մուսասիրի թագավոր Ուրզանայի տրամադրած օժանդակ զորքերով ու մարտակառքերով, շարժվում է դեպի «Ասորեստանի լեռները», ուր հսկայական կոտորածներ է պատճառում։ Իր այդ հաղթանակի պատվին Ուրզան Մուսասիրում զոհեր է մատուցում և տոնակատարություն կազմակերպում տեղի բնակիչների համար[63]։

Սակայն առաջավոր Ասիայի քաղաքական պատմության մեջ շրջադարձային փոփոխություններ են տեղի ունենում, երբ Ասորեստանում գահ է բարձրանում Սարգոն II-ը։ Երկրի ներսում, ի տարբերություն իր նախորդների, նա վերականգնում է ազնվականության ու տաճարների արտոնությունները, բանակում սահմանափակում ընչազուրկների թիվը և դրա փոխարեն նրանում ընդգրկում նվաճված երկրների զորքերից, պահում է նաև վարձկան զորք։ Այս բոլորը ապահովում են Սարգոնի առաջիկա հաջողությունները ներքին և արտաքին քաղաքականության մեջ։ Իր թագավորության հենց առաջին տարում Սարգոն II-ը հեռու արևմուտքում նվաճում է Սամարիան՝ Իսրայելի մայրաքաղաքը, մի բան, որ չհաջողվեց Սալմանասար V-ին և վաստորեն պատճառ դարձավ նրա ողբերգական վախճանի։ Այնուհետև, ասորեստանյան թագավորը նվաճում է Պադեստինի ծովափնյա քաղաքները, իսկ ամենահուժկու հարվածները խնամքով նախապատրաստում դեպի հյուսիս՝ Ուրարտուի դեմ[64]։

Նախքան վճռական ճակատամարտերին անցնելը, Սարգոնը զգալի ժամանակ է հատկացնում Ուրարտուի ներքին վիճակի համբերատար ուսումնասիրությանը։ Այդ նպատակով նա սիստեմատիկաբար հետախույզներ է ուղարկում Ուրարտուի տերիտորիան։ Սարգոնի գաղտնի միջամտությունը Վանի թագավորության ներքին գործերին՝ աստիճանաբար խարխլում է վերջինիս հիմքերը։ Կենտրոնական իշխանության դեմ ոտքի են կանգնում բազմաթիվ գրժգոհ տարրեր, այդ թվում մարզային կառավարիչներ, բարձրաստիճան զինվորական պաշտոնյաներ և այլն[65]։

Հետախուզական նամակներից մեկը ակնարկում է, որ Ուրարտուի ներքին երկպառակությունները թուլացրել էին նրա դիրքերը որոշ երկրներում, այդ թվում Մանայում, ուր, ըստ երևույթին, հակված էին թոթափելու Վանի թագավորության ծանր լուծը[66]։

Սարգոնի ժամանակվա հետախուզական նամակները, մյուս կողմից, վկայում են Վանի թագավորության և կիմմերների միջև տեղի ունեցած առաջին ռազմական ընդհարումների մասին[67]։

Հետախույզների հաղորդումներից հստակ երևում է, որ առայժմ Ուրարտուի ենթակայության տակ են գտնվում ոչ միայն Վանա լճից հարավ ընկած

---

[63] M. de Tsereteli, Études ourartéennes (III. La stèle de Sidikan-Topzaoua), RA, № 4, vol. XLIV, 1950, էջ 185—192. Գ. Ա. Մելիքիշվիլի, ՈՒԿՀ, 264.

[64] В. В. Струве, История древнего Востока, էջ 328—329. «Всемирная история», I, էջ 546.

[65] L. Waterman, Royal Correspondence of the Assyrian Empire, Ann Arbor, I—II (1930), III (1931), IV (1936) (այսուհետև հապավված՝ RCAE), № 444, 492. АВИИУ, 50 (4, 9).

[66] RCAE, № 381. АВИИУ, 50 (12).

[67] RCAE, № 197, 112, 146. АВИИУ, 50 (10 8, 11).

Խուրուշկիան, այլև է՛լ ավելի հարավ-արևելքի Արդինի-Մուսասիրը։ Նույնիսկ կիմմերներից կրած ծանր պարտությունից անմիջապես հետո նրանց կառավարիչները (ինչպես նաև Մուսասիրի կառավարիչի եղբայրն ու որդին) գնում են ողջունելու ուրարտական թագավորին։ Դրան ականատես են լինում ուրարտա-ասորեստանյան սահմանի վրա գտնվող բոլոր ամրոցների կայազորները[68]։

Սակայն Ուրարտուի անհաջողություններին զուգընթաց, նրանից աստիճանաբար երես է դարձնում և հակվում դեպի Ասորեստանը ռազմա-ստրատեգիական խոշոր նշանակություն ունեցող Արդինի-Մուսասիրը։ Այդ պարզորոշ երևում է նրա արքա Ուրզանայի՝ Սարգոն II-ին հասցեագրած նամակներից[69]։

Եթե Ռուսային ոչ բոլոր դեպքերում է հաջողվում հնազանդության մեջ պահել իր թագավորության ծայրամասային, առանձնապես հարավում եղած մարզերը, ապա կենտրոնական մարզերում ծագած ապստամբությունները նա շուտով ճնշում է և կարգ ու կանոն հաստատում երկրում։ Այդ մասին հետաքրքիր տվյալներ կան Աշշուրբանիպալի հետախուզական նամակներում[70]։

Բերված փաստերը վկայում են, որ Ռուսա I-ը հսկայական ջանքեր է գործադրել Վանի թագավորությունը ոչ միայն արտաքին ու ներքին վտանգներից զերծ պահելու, այլև կորսված մարզերը վերադարձնելու, իսկ որոշ դեպքերում էլ նոր տերիտորիաներ նվաճելու համար[71]։

Հետագա տարիներին ևս Սարգոն II-ը զգալի ջանքեր է գործադրում Ուրարտուի ներքին գործերին ակտիվ միջամտելու ուղղությամբ։ Սակայն Ռուսա I-ը ևս, իր կողմից, ամենևին էլ անգործության չէր մատնված Ասորեստանից օրավուր սպասվող սպառնալիքի հանդեպ։ Մ. թ. ա. 719 թ. Ռուսային տեսնում ենք ռազմական դաշինքի մեջ Սուկկու, Բալա և Արիտիկնա[72] քաղաքների հետ, որոնց բնակիչներից Սարգոն II-ը դաժան վրեժ է լուծում և վերաբնակեցնում «արևմտյան երկիր Խատտի»[73]։

Այդ նույն ժամանակներում Ռուսան զգալի ջանքեր է գործադրում իր տիրապետություններ ապահովելու մերձուրմյան շրջանում։ Այստեղ, Ուրմիա լճից դեպի արևելք ընկած Զիկիրտուն ինքն է աշխատում բարի-դրացիական հարաբերություններ սահմանել Ուրարտուի հետ։ Իսկ ինչ վերաբերում է Մանային, ապա Ռուսան շարունակում է ռազմական ակտիվ գործողություններ ձեռնարկել բռնի ուժով այդ երկիրը իր տիրապետությանը ենթարկելու։ Այդ մասին հաղորդում է Աշշուրբանիպալի մ. թ. ա. 719 թ. (?) թվագրվող նամակներից մեկը[74]։

Հետագայում, մ. թ. ա. 716 թ., Ռուսան հրահրում է Սարգոնի և նրա դրածո՝ Մանայի թագավոր Աղայի դեմ վերջինիս ենթակա որոշ երկրների կառա-

---

68 L. Waterman, RCAE, № 197. И. М. Дьяконов, АВИНУ, 50 (10).

69 RCAE, № 409, 768. АВИНУ, 50 (2, 7).

70 RCAE, № 197, 144, АВИНУ, 50 (10, 13).

71 Այս հարցերի մանրամասն հետազոտությունը տե՛ս Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), էջ 87—101։

72 Այդ քաղաքների տեղադրումը պարզված չէ։

73 Ասորեստանյան աղբյուրների այդ ժամանակվա «Խատտի երկիր» տակ սովորաբար պետք է հասկանալ Ասորիքը, Փյունիկիան և Պաղեստինը, ինչպես նաև Փոքր Ասիան։ «Խատտի երկիրը» նեղ իմաստով Կարխեմիշի թագավորությունն է։ Տե՛ս И. М. Дьяконов, АВИНУ, 46 (32) և ծանոթ. 1։

74 RCAE, № 198. АВИНУ, 50 (14).

վարիչների՝ Ուիշդիշի արքա Բագդատուին և Չիկիրտուի արքա Միտատտիին[75]։ Ռուսայի ակտիվ աջակցությամբ վերջիններիս հաջողվում է հաղթանակ տանել Մանայի դեմ՝ Ուաուշ լեռան վրա, որտեղ ապաստանվում է Ազան։ Սարգոնը վրա է հասնում և պարտության մատնում նրանց՝ Ուիշդիշի Բագդատտի արքային դաժան մահապատժի ենթարկելով՝ քերթելով նրա մաշկը։ Սակայն Ռուսան նոր գործողությունների է դիմում։ Այս անգամ նա գաղտնի կապերի մեջ է մտնում Մանայի նոր թագավոր Ուլլուսունուի հետ (որին Սարդոնն էր կարգել թագավոր՝ Ազայի մահից հետո), որի միջոցով Ասորեստանի դեմ է հրահրում Կարալլուի և Ալլարրիայի[76] թագավորներին։ Սարգոնը հաղթանակ է տանում ինչպես այդ երկրների, այնպես էլ Մանայի նկատմամբ։ Մարտերի ընթացքում նա հրկիզում է Մանայի արքայանիստ քաղաք Իզիրտուն։ Ուլլուսունուն ստիպված անձնատուր է լինում և ներումն հայցում, որին և արժանանում է Սարգոնի կողմից[77]։

Սակայն Ռուսան բնավ չի հաշտվում ստեղծված իրադրության հետ։ Կապերի մեջ մտնելով Մանայի երկրամասերից մեկի կառավարչի՝ Դայուկկուի հետ, Ռուսան մ. թ. ա. 715 թ. կարողանում է բռնագրավել Մանայի 22 ամրոցներ, սակայն Սարգոնը դրանք ետ է նվաճում և ընդգրկում Ասորեստանի սահմանների մեջ։ Ուրարտական թագավորից, միաժամանակ, որպես հարկ նա ստանում է խոշոր ու մանր եղջերավոր անասուններ[78]։

Այսպիսով, Ռուսան տարիներ շարունակ գործում է Ասորեստանի դեմ և անհանգստություն պատճառում Սարգոն II-ին՝ ժամանակ առ ժամանակ իր ազդեցության ոլորտի մեջ ներգրավելով Ասորեստանին ենթակա մի շարք երկրներ ու մարզեր։ Եվ ահա Սարգոնը իր թագավորության ութերորդ տարում, այսինքն՝ մ. թ. ա. 714 թ. ավերիչ արշավանք է ձեռնարկում Ուրարտուի դեմ[79]։

Սարգոնի մ. թ. ա. 714 թ. արշավանքը ծայր աստիճանի ծանր կացության մեջ դրեց Ուրարտուին ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ասպարեզում։ Նա զրկվեց մերձուրմյան շրջանի, Վանա լճից դեպի արևելք, հարավ և հարավ-արևելք ընկած մի շարք շատ հարուստ երկրագործական և անասնապահական կենտրոններից։ Դա ոչ միայն Ռուսայի թագավորության փաստացի անկումն էր, այլև Ուրարտուի վայրէջքի սկիզբը։ Սարգոնի այդ արշավանքից հետո Ռուսա I-ը ընդամենը մեկ տարի է մնում ուրարտական գահի վրա[80], ըստ որում այդ ժամանակամիջոցում նա համարյա լիովին զիջում է իր դիրքերը Առաջավոր Ասիայում և միայն դաշինքների մեջ մտնում որոշ արևմտյան մարզերի հետ ընդդեմ Ասորեստանի։

---

75 Ուիշդիշը (ուրարտ. Ուգիշտի) տեղադրվում է Ուրմիա լճի արևելյան ափին, իսկ Չիկիրտուն՝ նրանից արևելք։

76 Այդ երկրները տեղադրվում են Ուրմիա լճից դեպի հարավ, մի կողմից Ջագատայ գետի և մյուս կողմից Կիզիլ-Ուզենի վտակների միջև։ Տե՛ս N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, էջ 99։

77 И. М. Дьяконов, АВИНУ, 46(52).

78 Նույն տեղում, 46 (75)։

79 Այդ արշավանքի արդյունքները համառոտակի ամփոփված են Սարգոնի տարեգրության մեջ, իսկ մանրամասն և պատկերավոր նկարագիրը տրված է այսպես կոչված «Լուվրի աղյուսակի» ստվարածավալ տեքստում։ Տե՛ս Fr. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, Paris, 1912.

80 Միանդամայն իրավացի է Ն. Ադոնցը, երբ Ռուսա I-ի թագավորության վերջը համարում է մ. թ. ա. 713 թ. (ի տարբերություն տրադիցիոն 714 թ.). N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, էջ 193։

БИАЙНИЛИ-УРАРТУ В ПЕРИОД СВОЕГО РАСЦВЕТА

Н. В. АРУТЮНЯН

(Р е з ю м е)

В статье рассматривается военно-политическая история Биайнили-Урарту в период его наивысшего могущества — с начала правления Аргишти I (786 г. до н. э.) вплоть до предпоследнего года царствования Русы I (714 г. до н. э.). В указанный период истории Ванское царство в основном обеспечивало свою гегемонию в Передней Азии.

Биайнили-Урарту особо отличился в период правления Аргишти I (786—764 гг. до н. э.). При нем границы влияния этого древневосточного государства доходили вплоть до Ассирии на юге, северных и восточных берегов Урмийского озера и среднего течения реки Дияла — на востоке и юго-востоке, правобережных территорий бассейнов верхнего и среднего течения реки Евфрат (вплоть до Северной Сирии)—на западе и юго-западе, бассейна реки Чорох, районов к северу от оз. Чалдыр, северо-западных берегов оз. Севан—на севере.

Биайнили-Урарту в Передней Азии успешно сохранил первенство также на протяжении первых двух десятилетий царствования Сардури II (764—742 гг. до н. э.). Этот урартский царь в основном обеспечивал те же пределы Биайнили-Урарту, которые существовали при его отце—Аргишти I. Однако поражение, нанесенное Сардури II Тиглатпаласаром III в 743 и 735 гг. до н. э. в Северной Сирии, в значительной мере ухудшило позиции Ванского царства на юге, юго-западе и юго-востоке.

Преемник же Сардури II—Руса I своими военными успехами особо отличился на северо-востоке, в бассейне оз. Севан и в сопредельных территориях. Наряду с четырьмя областями на западном и южном побережьях Севанского озера, которые стали объектами завоевания еще при Сардури II, Руса I покорил также 19 других «стран», расположенных «с той стороны озера, в горах высоких». Господство Биайнили-Урарту на этих далеких территориях северо-восточной периферии сохранилось, по-видимому, до конца правления Русы I. Далее Руса I укрепил свои позиции на юго-востоке—в известном военно-стратегическом и культовом центре Ардини-Мусасир и с активной помощью его одержал на юге победу над Ассирией.

Впоследствии, по мере нового возвышения Ассирии при Саргоне II и появления на древнем Востоке киммеров — новых противников Русы I, позиции Биайнили-Урарту на арене переднеазиатской истории постепенно стали ухудшаться. К тому же знаменитый поход Саргона II в 714 г. до н. э. окончательно отодвинул Биайнили на задний план и лишил его целого ряда богатых земледельческих и скотоводческих центров в бассейне оз. Урмия, к востоку, югу и юго-востоку от оз. Ван и т. д. Таким образом, 714 год до н. э. фактически стал не только годом заката црствования Русы I, но и началом упадка Биайнили-Урарту в целом.